

ըղծիւքն, զորոյ թերեւս 'ի սկզբանն ինքն իսկ ոչ գիտէր զչափ եւ զսահման, բայց եզր՝ զթագաւորականն նկատէր փառս, առ որ պիտոյ համարէր լայնածաւալ երկիր նուաճեալ. բայց եւ չափաւորեալ իմն, զի մի՛ ընդ հզօրագոյնսն ընդհարցի աշխարհակալս:– Ի սոցին սակի գլխաւոր էր արեւմտեանն այն դրացի, սուլտանն Իկոնիոնի. եւ զի սա ոչ ըստ վաղեմի հայրենատուր ինչ ժառանգութեան տիրէր այնքան ընդարձակագոյն նահանգաց եւ աշխարհաց, այլ ըստ հարստահարութեան, ոչ ինչ խղճէր եւ Լեւոն՝ կարճել զսահմանս նորին եւ զիւրն աճեցուցանել. մանաւանդ զի նա այլադէն՝ բռնաբարէր զվիճակս քրիստոնէից, զորս ինքն թափել նկրտէր՝ ոչ միայն աշխարհակալութեան՝ այլ եւ խաչակրութեան օրինօք: Յաջողեցին Լեւոնի առ այս՝ ընտանի շփոթք բազմորդի սուլտանին՝ Խլիճարսլանի. յորմէ 'ի բաց կորզեաց զբովանդակ Իսաւրիա, այլ եւ զԱռակլիա քաղաք, եւ յաջողակ բաղդին արշաւեալ երբեմն ընդ հիւսիս՝ մինչեւ 'ի Կեսարիա մայր քաղաքաց Փոքուն Հայոց, եւ պաշարեալ մերձ յառումն, ստիպեաց զսուլտանն՝ տալ ընդ այնր եւ ընդ Առակլեայ *ոսկի բագում*, եւ դաշինս կռեալ ընդ նմա՝ դարձաւ յետս¹⁷:

2. Արշաւանք Սալահէտտինի 'ի սահմանս Անտիոքայ, եւ Լեւոնի նուաճել գնոսին

Քանզի պաշտպան սոցին երբեմն հզօրն Սալահէտտին զբաղեալ էր յաշխարհն Ասորոց, 'ի քակտել զտունս արեւմտեայցն անդր հաստատելոց, հինգ ամսօք եւեթ զկնի պայագատութեան Լեւոնի՝ զգլխաւորն եւ զակնադիտակ զկենդրոն եւ զնպատակ ամենայն կալուածոց նոցին՝ զԵրուսաղէմ քաղաք, հանդերձ ամենայն սրբութեամբք նորին՝ յափշտակեալ (2 հոկտ. 1187), արկեալ ընդ զօրութեամբ բազկի եւ դենի իւրոյ. յորմէ սարսեալ սասանեցաւ եւ 'ի սուգ եմուտ ամենայն քրիստոնէութիւն,

¹⁷ Զբան հին յիշատակարանին՝ չափաւ կրկնէ Վահրամ.

«ԸզՍաւրիա աշխարհն առեալ,
ՅԱտալիա մեծըն հասեալ.
Հերակլիա եղեւ կալեալ,
Եւ ընդ գանձուց փոխանակեալ:
Զկեսարիա զօրօք պատեալ,
Եւ 'ի յառնուլըն մերձ ածեալ,
Ապա ոսկի բագում առեալ
Եւ ընդ սուլտանըն դաշն եղեալ»: